

ԳԱՂԱՓԱՐԻ ՄԻ ՅԱՂԹԱՆԱԿ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

(Գլադստոնի չաղթութեան առիթով)

Գլադստոնի կուսակցութեան չաղթութիւնը մօտազայ ընտրութիւններում անկասկած էր համարւում: Սեւ այդ գուշակութիւնը մի մարգարէութիւն չէր և ահա ինչու: Անգլիան մի յառաջդիմական երկիր է թէև զօրեղ պահպանողական տեմպերամէնտով: Այդ երկրում որ և է պահպանողական մինիստրութիւն անպատճառ տեղի է տալիս ազատամիտ մինիստրութեան, երբ սորա նոր ծրագիրը հասունանում է տալիս ներքին ընթացքում ճշմարիտ է որ անգլիացիք չեն սիրում մի մեծ փոփոխութիւն իրազօրծել հէնց որ այդ միտքը կը յայտնւի, այլ այդ փոփոխութիւնը յառաջ բերելու համար նոքա կարիք են զգում մի քանի տարի կշռելու, այդ միտքը որոճալու և նորա հետ հաշուելու համար և համոզելու նորա լաութեան և անհրաժեշտութեան մէջ: Ճշմարիտ է և այն, որ այդ կէտում անգլիացիք կուրօրէն չեն հպատակւում ոչ մի հեղինակութեան, թէկուզ այդ հեղինակութիւնը լինի ազատամիտների համար մի Գլադստոն, որ լորդ Պալմերստոնի մահից յետոյ, ուրեմն ահա երեսուն տարի շարունակ զլուխ է Անգլիացի ազատամիտ մերթ չաղթող, մերթ չաղթող կուսակցութեան և որ մէկ չէ, երկու անգամ չէ որ զլուխ է եղած անգլիական մինիստրութիւնների, հետեւապէս և կառավարութեան: Բայց, միւս կողմից, շնորհիւ թերեւ անգլիացիների այդ տեմպերամէնտին, նոյն այդ երկրի ազատամիտ կուսակցութիւնը, որ սովորաբար նախաձեռնողն է արմատական օրինազծների, շնորհիւ իւր երկարամեայ պատմական կրթութեան և այն խիստ սերտ շփման որ նա ունի ժողովրդի հետ, առաջարկում է միայն այնպիսի փո-

փոխութիւններ, որոնց համար նա վստահ է թէ կարող է ընդունելի անել տալ ազգի մեծ մասին մի քանի տարի եռանդով քարոզելով, որքան էլ համարձակ երևան նոքա առաջին անգամից:

Այդ պատճառով Անգլիայում ազատամիտների կուսակցութեան կողմից մտցրած ընտրութիւնները այնպիսի ընտրութիւններ են, որոնց համար պատմութիւնը շատ թէ քիչ հաստատ հող է պատրաստել: Այդ ընտրութիւնները, երբ նոքա կատարուում են վերջանում, այլ ևս միայն ազատամիտների սեպականութիւն չեն, այլ ամբողջ երկրի, այն աստիճանի նոքա խոր արմատներ են գցում ժողովրդի մտքերի ու բարք ու վարքերի մէջ:

Դորանով պէտք է մեկնել և այս՝ միայն Անգլիայում սովորական երևոյթը, որ պահպանողական կուսակցութիւնը պահպան է ոչ միայն իւր կուսակցութեան համար առանձնապէս թանկագին հաստատութիւնների, այլ նաև ընտրութիւններով ձեռք բերած հաստատութիւնների ու օրէնքների, թէկուզ սոքա ձեռք բերած լինեն ազատամիտների ջանքերով, հակառակ պահպանողականների երբեմնեան ընդդիմադրութիւններին:

Ոչ մի այլ երկրում պահպանողական կուսակցութիւնները այդպէս չեն. ուրիշ երկիրներում պահպանողականները, հէնց որ կառավարութեան ղեկը իրանց ձեռքն են գցում, ղեռ ամենից առաջ մտածում են ազատամիտների ընտրութիւնները իրանց պահպանողական ընտրութիւններով, այսինքն ընկալելով քանդել:

Ձարմանալու չէ ուրեմն որ Անգլիայի պահպանողական կուսակցութիւնը շատ շատերից նկատուում է որպէս երկրի յառաջդիմական շարժման մի ֆակտոր և ոչ ամեն ինչ յետ ու յետ տանող: Արդէն ձեռք բերած ժողովրդական ազատութիւնների համար Անգլիայի պահպանողական կուսակցութիւնը հաւատարիմ պահպան է կանգնած: Եւ այդ պատճառով Անգլիայում պահպանողական կուսակցութիւնը երկրի յառաջդիմականներից այնպէս չի հալածւած, ինչպէս նոյնանուն կուսակցութիւնները Բելգիայում, Ֆրանսիայում և այլն:

Եթէ երկրի և այն էլ Անգլիայի պէս ազատութեան սովոր մի երկրի ժողովրդական ձայնատուութեանը տալու լինենք հասարակաց կարծիքի կշիռը, ապա ուրեմն մենք ստիպւած ենք ընդունելու, որ այդ նոյն հասարակաց կարծիքը պարբերապէս հակուում է կամ դէպի

պահպանողականները կամ ղէպի ազատամիտները, երկու կուսակցութիւններն էլ իւր սեպհականը համարելով: Երբ ազատամիտները բաւականաչափ գործած են լինում իրանց խոստացած ծրագիրը իրագործելու չափ, որից յետոյ սկսւում է արդէն նոցա անծրագիր և թույլ գործելը կամ ազգից ղեւ չը մարսած նոր ծրագիրներով գործելը, — այն ժամանակ հասարակաց կարծիքը հակւում է ղէպի պահպանողական կուսակցութիւնը, որ նոյն այդ տարիներում կարողանում է որոշել կառավարչական այլ գործունէութեան համար ազգից ընդունելի մի ծրագիր, օգտւելով հակառակորդների թույլ կողմերից ներքին թէ արտաքին քաղաքականութեան վերաբերեալ:

Բնական է որ ամբողջ ազգը միահաճու աչն չի տալիս մի կամ միւս կուսակցութեան, այլ յօգուտ մէկի կամ միւսի բաղդը որոշողը լինում է ազգի մի մասը, որի այս կամ այն կողմ անցնելովը վճռւում է մեծամասնութիւնը պարլամենտում: Այդ մէկ մասի ներկայացուցիչների թիւը լինում է 30 — 50 — 100 — 150, նախած հանգամանքներին: Ազգի մնացած մասը ներկայացնում են երկու ամփոփ մասսաներ, որոնցից մէկը հաստատ ազատամիտ աւանդութիւններով է սնուցւած, միւսը՝ պահպանողական աւանդութիւններով, զրեթէ ամփոփոխ հաւատարիմ իւրաքանչիւրը իւր դրօշակին:

Այսպէս ենք ահա հասկացել մենք անգլիական պարլամենտական ընտրութիւնների ոգին. գորանով ենք մեկնում նաև այս եզակի երեւոյթը, որ Անգլիայում պարլամենտական մեծամասնութիւնների, հետևապէս և մինիստրութիւնների, պահպանողական կամ ազատամիտ լինելը գրեթէ մաթեմատիկական ճշգրտութեամբ որոշւում է կառավարող մինիստրութեան տեղողութիւնով: Երբ պահպանողական մինիստրութիւնը գործել է մի որոշ ժամանակամիջոց, որի ընթացքում ազատամիտ կուսակցութիւնը իւր ծրագիրը բաւականաչափ կարողանում է ընդհանրացնել ազգի մէջ, — այն ժամանակ նոր ընտրութիւնները աւելի յաջող են լինում ազատամիտների մինիստրութեան համար. և vice versa.

Արդ, նոյն իսկ այդ ժամանակամիջոցը որոշւած է մի տեսակ ներքին կեանքի հանգամանքների ոյժով: Անգլիայում ոչ մի մինիստրութիւն եօթ տարուց աւելի չի տևում, իսկ այս վերջին երեսուն

տարիներում վեց տարին սովորական միջոցն է մինիստրական փոփոխութեան, նման մի կատարելագործւած մեծ մեքենայի, որի անիւները ամեն 6 - 7 տարին նորոգւում են:

Ասածս հաստատելու համար—ահա մի ցուցակ, որ ես դնում եմ ընթերցողներին առջև. այդ ցուցակը պարզ ցոյց է տալիս թէ որքան կանոնաւոր կերպով իրար յաջորդում են հասարակաց կարծիքի ուղղութիւնները Անգլիայում, հետեւապէս նաև որքան մեծ կանոնաւորութեամբ իրար յաջորդում են պահպանողական և ազատամիտ կուսակցութիւնները:

1862—1868 մինիստրութիւն Դիզրաէլի (պահպանողական):

1868—1874 մինիստրութիւն Գլադստոն (ազատամ.):

1874—1880 մինիստ. Դիզրաէլի (նոյնը լորդ օֆ Բիկոնսֆիլդ):

1880—1886 մինիստրութիւն Գլադստոն (ազատամ.):

1886—1892 մինիստրութիւն Սոլսբրի (պահպանողական):

Կրկնում ենք, որ այդ երեւոյթը լոկ պատահական չէ, այլ կապւած է անգլիական կեանքի հանգամանքների և կուսակցական կուռի կանոնաւոր ընթացքի հետ: Ահա թէ ինչու մարդարէութիւն չէր առաջուց նախատեսել լիբերալների յաղթութիւնը, այլ հաւանականութեան վերայ հիմնւած մի հաշիւ, մանաւանդ որ մասնաւոր ընտրութիւնները այս վերջին տարիներում մեծ մասամբ յօգուտ լիբերալների և մինիստրութեան հակառակ էին խօսում:

Մասնաւոր ընտրութիւնների հետեւանքները բոլոր սահմանադրական երկիրներում նախանշաններ են ընդհանուր ընտրութիւնների ելքին, մանաւանդ երբ նոքա բազմաթիւ են լինում. և յաճախ մասնաւոր ընտրութիւններով ¹⁾ հասարակաց կարծիքի տարուբերմունքը իրան զգացնել է տալիս:

Եւ բաւականի թւով պահպանողական վիճակներ մասնաւոր ընտրութիւնների ժամանակ այս վերջին տարիներում կատարեցին ազատամիտ, հետեւապէս Սոլսբրիի մինիստրութեան համար չարագուշակ ընտրութիւններ:

¹⁾ Երբ պարլամէնտի անդամներից մէկը մեռնում է իւր օրէնսդրական լիազօրութիւնները դեռ չը լրացրած՝ նորա ներկայացրած ընտրողական վիճակը ընտրում է մի ուրիշին: Այդ է մասնաւոր ընտրութիւնը. բայց երբ պարլամէնտ օրէնքով լուծւում է, ալն ժամանակ կատարւում են ընդհանուր ընտրութիւններ:

Ներկայ 1892-ի ընտրութիւնները մի առանձին մեծ կարեւորութիւն էին ներկայացնում: Իրլանդական խնդիրը առաջին գծի վերայ էր դրած Գլադստոնի ծրագրում: Մի խնդիր, որ հարկւրաւոր տարիների ընթացքում քաղաքական ու տնտեսական-սոցիալական խնդրի կնճռոտ կերպարանքն է ստացել և որ ամենքից ընդունում է որպէս Անգլիայի, հետեւապէս քաղաքակրթւած մարդկութեան վերքերից մէկը, — այդ խնդիրը այժմ վերջնականապէս անցել էր իրլանդական հողից անգլիական հողի վերայ:

Անգլիայի ազատամիտ կուսակցութիւնը նոր է որ աշխատում է Իրլանդիայի քաղաքական և տնտեսական դրութիւնը բարելոքել. հէնց օրինակի համար Գլադստոնի ժամանակ՝ այն որ մինչ 60-ական թւականների վերջերքը մեծամասնաբար կաթոլիկ Իրլանդիայում իշխող և արտօնւած անգլիական բողոքական եկեղեցին, որ պետական եկեղեցի էր սահմանւած, իբր արտօնւած եղեղեցի վերացւեց և հաւասարացւեց միւս եկեղեցիների դրութեան հետ:

Բայց իրլանդական հովուութիւնը, այսինքն ինքնավարութիւնը, աւելի մեծ և կնճռոտ խնդիր է ներկայացնում: Այդ խնդրի բաւարար լուծումը միշտ խորտակել է՝ զարնւելով անգլիական ազգի և պարլամէնտի մեծամասնութեան անդրակի չկամութեան: Իրլանդիան կամենում է իւր կառավարութիւնն ունենալ և ոչ թէ կառավարել անգլիական պարլամէնտով, ուր իրլանդական պատգամաւորների ձայնը միշտ խեղդուում է անգլիացիների $5\frac{1}{2}$ անգամ աւելի ձայներով. անգլիական պարլամէնտի միջոցով նոքա չեն կարողացել օրէնքներ ձեռք բերել, որոնք նպաստաւոր լինէին իրլանդական ազգի շահերին, որովհետեւ իրլանդացիներին իրանց ձեռքում պահելը թէ քաղաքականապէս և թէ տնտեսապէս — միշտ եղել է անգլիական քաղաքականութեան հիմնաքարը Իրլանդիայի գործերի նկատմամբ: Եւ որ զլիաւորն է, Անգլիայի այդ դարեւոր քաղաքականութիւնով, Իրլանդիան, որպէս արդէն վաղուց վկայել են և վկայում են բոլորեքեանք, ովքեր միայն հեռւից թէ մօտիկից ուսումնասիրել են այդ երկիրը, ողորմելի, անասելի ողորմելի վիճակի մէջ է եղել և այժմ էլ է: Բաւական է այսքանը միայն խմանալ, որ այդ բազմաշարժար ազգը, որ այժմ ընդամենը միայն 4 միլիոն 700 հազար բնակիչներից է բաղկացած, այս վերջին յիսուն տարի-

ներում տւել է զլիաւորապէս Հիւսիսային Ամերիկային ոչ պակաս քան 3 միլիոն 415 հազար հոգի զաղթականներ, որոնցից 770,700 հոգի միայն այս վերջին տասը տարիներում:

Իրլանդացիք կարողացել են սակայն իրանց անընդհատ կուռլ և հակառակութիւնով անգլիական քաղաքականութեան դէմ՝ իրանց դատը լսելի անել ամբողջ աշխարհին և միշտ անհանգիստ անել անգլիական կառավարութիւնը: Եւ եթէ նոքա այդ կռիւր կարողացել են այդ աստիճանին հասցնել և ղիմանալ, այդ անկասկած նրանից է, որ իրլանդացիք, որքան էլ քնասւած լինեն, բայց և այնպէս ամփոփ ազգաբնակութիւն են կազմում: Ազգերի քաղաքական ու կուլտուրական կեանքի համար դա մի այնպիսի հանգամանք է, որ մենք կարեոր ենք համարում չղել մեր ընթերցողներին մեր «Թիւ և Ոյժ» յօդւածին¹⁾:

Իրլանդացոց ամփոփ ազգաբնակութիւնը մի այնպիսի հանգամանք է, որ եթէ նոքա ինքնաճանաչութիւն ունենան և կարողանան օգտուել իրանց ձեռքից եկած հանգամանքներից և արդէն ունեցած իրաւունքներից, — անգլիական կառավարութիւնը միշտ տենդային դրութեան մէջ կարող են պահել:

Եւ այդպէս էլ նոքա վարւել են, ունենալով իրանց քաղաքական շարժման պարագլուխ՝ Օ'Կոննորներ, Ո'Լիւլաններ, Պարնէլներ:

Վերջինիս մասին «Մուրճ»-ի ընթերցողները արդէն տեղեկութիւն կ'ունենան «Մուրճ»-ի քաղաքական տեսութիւններից: Գլուխ կանգնելով իրլանդական պատգամաւորների անգլիական պարլամէնտում՝ իւր այդ կարգաւորւած կուսակցութեան միահամուռ վարմունքով, կուսակցութեան միաբանութիւնով նա ոյժ էր ձեռք բերել, անգլիական պարլամէնտում այս կամ այն դիրքը բռնելով՝ վճռել մեծամասնութիւնը յօգուտ կամ հակառակ կառավարութեան և կամ խանգարել պարլամէնտի զբաղմունքները, միշտ պահանջներ դնելով յօգուտ իրլանդական հոմ-ռուլի: Դորա հետ կապւած իրլանդական ժողովուրդը, զրգուելով և պաշտպանելով նաև Ամերիկայում ապրող իրլանդացիներից՝ սկսեց մի շարժում՝ ընդդէմ տեղական իշխանութիւնների և հողատէրերի, արտալատելով այդ բոլորը թէ հողի կապալադրամը չը վճարելով, թէ բռնութիւններով և թէ սպանութիւններով:

¹⁾ Տես «Մուրճ» 1890 թ. № 5.

Մինչև 80-ական թվականներին կէսը իրլանդական դատի պաշտպանները, սակայն, իրօք միայն իրանք իրլանդացիք էին. նոքա ուժեղ դաշնակից չունէին Անգլիայում. բանը այնպէս էր որ մի կողմ՝ կանգնած էին միմիայն իրլանդացիք, միւս կողմ՝ անգլիացիք առհասարակ:

Այս դրութիւնը սակայն արմատապէս փոխեց, երբ 1886 թվականին Անգլիայի ազատամիտ կուսակցութեան պարագլուխ Գլադստոնը իրլանդական հոմ-ռուլը (ինքնավարութիւնը) իւր ծրագրի մէջ ընդունեց: Նա յայտարարեց դորանով որ իրլանդիային ինքնավարութիւն տալը ոչ միայն իրլանդական խնդիր է, այլ առհասարակ անգլիական մի խնդիր, որի բաւարար լուծումից կախած է ոչ միայն իրլանդացոց բարօրութիւնը, այլ և անգլիական քաղաքական կեանքի յառաջդիմական և կանոնաւոր ընթացքը:

Մեր աչքում Գլադստոնի այդ վարմունքը զուտ մարդասիրական մի ակտ չէր դէպի մի այլ ցեղի ազգ, այլ մի քայլ էր, որ թելադրւած էր անգլիական շահերի ուրոյն ըմբռնումից:

Նա բաց աչքով նայեց դրութեան վերայ և տեսաւ որ իրլանդիային ինքնավարութիւն տալով՝ Անգլիայի քաղաքական դիրքը չի վտանգել, իսկ միւս կողմից՝ Անգլիան ազատ կը լինի մի մշտական գլխացաւանքից, որ միաժամանակ մի արատ է անգլիական ազգի և անունի համար:

Լոկ մարդասիրութիւնով Գլադստոնը շնոս չէր կարող ունենալ իւր կողմը դրաւել ազգի մեծամասնութիւնը: Պետական բարձրագոյն շահն էր պահանջում այդ. և համոզցնել անգլիացիներին այդ բանում, — նորա գլխաւոր և գրեթէ միակ ջանքն է եղել այս վերջին վեց տարիներում:

Ինչպէս պսակեց Գլադստոնի այդ ջանքը:

1885 թվականին, իւր նոր ծրագիրը յայտարարելուց առաջ, անգլիական պարլամէնտը այնպիսի մի կազմ ունէր, որ ազատամիտ կուսակցութիւնը, որ նոյնն էր թէ Գլադստոնեանները, 84 ձայնով աւելի զօրեղ էին քան պահպանողականները, Գլադստոնի կուսակցութեան մէջ չը հաշւելով Պարնէլի իրլանդական կուսակցութիւնը, քանի որ այդ ժամանակ Պարնէլի կուսակցութիւնը առանձին էր:

Բայց երբ Գլադստոնը դաշնակցութիւն կապեց Պարնէլի հետ

և իւր ծրագրի մէջ ընդունեց իրլանդական հոմ-ռուլի խնդիրը, այն ժամանակ ազատամիտների մի մասը, լորդ Հարդինգտոնի գլխաւորութեամբ՝ բաժանեց Գլադստոնից. նոքա ցանկանում էին որ Իրլանդիան մնայ այնպէս միացած Անգլիայի հետ ինչպէս մինչ այժմ. դոքա միութեան (ունիա) կողմնակիցներ էին, հետեւապէս կուլեցին ունիոնիստներ:

Իրլանդական խնդրում ունիոնիստներ էին բնականաբար նաև բոլոր պահպանողականները, որոնց պարագլուխը, լորդ Բիկոնսֆիլդի մահից յետոյ, լորդ Սոլսբրիին է:

Այսպիսով պահպանողական կուսակցութիւնը Սոլսբրիի գլխաւորութեամբ դաշնակից գտաւ ազատամիտների մի Ֆրակցիայի մէջ, որի պարագլուխն է լորդ Հանդինգտոն, որոնք, որպէս ունիոնիստներ՝ Գլադստոնի դէմ են:

Իսկ միւս կողմից Գլադստոնի ազատամիտ կուսակցութիւնը, կորցնելով Հարդինգտոնի Ֆրակցիան, դաշնակից գտաւ յանձին Պարնելի և նորա կուսակցութեան, յանուն հոմ-ռուլի, որ երկուսի ծրագրումն էր:

Բայց Գլադստոնի համար կորուստը աւելի մեծ եղաւ քան ձեռք բերածը: Երբ պարլամէնտը նորից արձակեց և 1886 թւականին նոր ընդհանուր ընտրութիւններ եղան, հետեւանքները պարզ ցոյց տւին որ Անգլիայի ժողովուրդը դեռ ևս բոլորովին պատրաստ չէր Գլադստոնեան-Պարնելեան իրլանդական քաղաքականութեան համար: 1886 թւականի ընտրութիւններից ունիոնիստները, այսինքն պահպանողականները և ունիոնիստ-ազատամիտները, յաղթող դուրս եկան. նոցա ձայները 118-ով աւելի էին քան Գլադստոնեաններինը և Պարնելականներինը միասին առած:

Այդ մեծամասնութեան վերայ յենւած՝ կողմէնց Սոլսբրիի պահպանողական միւնիստութիւնը, որ և տւեց մինչ ներկայ 1892 թ. յուլիս ամիսը, երբ նոր ընդհանուր պարլամէնտական ընտրութիւններ կատարւեցին:

Ընդդիմադրութեան վիճակի մէջ մնալով՝ Գլադստոնը այս վեց տարիները գործադրեց պրոպագանդ անելու յօգուտ իւր նոր ծրագրի, յօգուտ իրլանդական հոմ-ռուլի:

Իւր պրոպագանդով նա մեծամեծ հետեւանքների հասաւ:

Ներկայ 1892 թ. յուլիսի ընտրութիւններէց հոմ-ուսլի կուսակիցները, որ նոյնն է թէ Գլադստոնեանները, դուրս եկան ունիոնիստների վերայ յաղթող 40 ձայնով: 1886 թւականից դէս, ուրեմն այս վեց տարիներում, Գլադստոնի կուսակցութիւնը ոչ միայն հաւասարեց ունիոնիստների կուսակցութեանը, խլելով նոցա առաւել ձայների կէսը (118-ի կէսը = 59), այլ և գերազանցելով նորան 40 ձայներով: Գլադստոնը վաստակեց ուրեմն այս վեց տարիների ընթացքում $59 + 40 = 99$ ձայն:

Եթէ ի նկատի առնելու լինենք որ զաղափարի այդ նաճումը կատարւել է մի խնդրի նկատմամբ, որի մասին անգլիական ազգը, իբր ամբողջութիւն, հարիւրաւոր տարիներ շարունակ միայն մի կարծիք է ունեցել, և ի հարկ է հակառակութեան մտքով, այն ժամանակ հասկանալի կը լինի, որ զաղափարի նաճումը ահագին է եղել այս վեց տարիներում: Որովհետեւ ակներեւ է որ այդ հարիւր ձայները նաճւել են ոչ թէ Իրլանդիայի իրլանդացիների մէջ, այլ Մեծ-Բրիտանիայում, անգլիացիների, վալիսցիների և շոտլանդացիների և Իրլանդիայի անգլիական և շոտլանդական ազգաբնակչութեան մէջ:

Գլխաւորը առաջժամ այդ է, թէ և իրողութիւն է որ, եթէ չը հաշւելու լինենք իրլանդացիների ձայնը, անգլիական, շոտլանդական ու վալիսական ձայնատուները դեռ ևս միայն կիսով չափ ձայն տւեցին յօգուտ իրլանդական հոմ-ուսլի, իսկ աւելի ճիշդն ասած՝ կէսից մի թէ և չնչին, այն է շուրջ 33 հազար ձայների առաւելութեամբ հակառակ եղան իրլանդական հոմ-ուսլին:

Այդ իրողութիւնը սակայն շատ չի նազեցնում մոքի յաղթանակը, որովհետեւ եթէ այսօր անգլիացիք միայն մի ինչ որ երեք տասնեակ հազար հոգու առաւելութեամբ են հակառակ իրլանդական ինքնավարութեան զաղափարին, վեց տարի առաջ այդ առաւելութիւնը միլիոն էր կազմում:

Վեց տարի առաջ, 1886 թւականի ընտրութիւններին, Գլադստոնը իւր հոմ-ուսլեան ծրագրով յաղթւեց գլխաւորապէս այն պատճառով, որ անգլիացի ընտրողների մի մասը չուզեց կարծիք յայտնել իւր համար դեռ ևս չը հասունացած մի խնդրի մասին. և հէնց այդ էր պատճառը, որ միլիոնաւոր ընտրողներ ամենեւին չը մասնաճեղքեցին այն ընտրութիւններին. դորանից մի տարի առաջ՝ 1885

Թւականին՝ կատարւած ընտրութիւններին երբ. Վլադստոնը հոմ-գուլի ծրագիրը չունէր, ազգը, օգուտ քաղելով ընտրողական նոր կատարւած բեկորմից, որով ազգի աւելի մեծ խաւերի վերայ տարածւեց ձայն տալու իրաւունքը, շատ աւելի մեծ Թւով մասնակցեց ընտրութիւններին, որոնցից և Վլադստոնը յաղթող դուրս եկաւ, քան յաջորդ 1886 թւականին, երբ Վլադստոնը արդէն պարզել էր իւր նոր ծրագիրը, որով և նա յաղթւեց հակառակորդների ահապին մեծամասնութիւնով: Եթէ 1885-ին ընտրութիւններին մասնակցեցին շուրջ 4 միլիոն 600 հազար հոգի, 1886-ին, հոմ-գուլի խնդրի պատճառով, մասնակցել էին միայն 3 միլիոն հոգի: Տարբերութիւնը մէկ ու կէս միլիոնից աւելի էր: Այժմ, վեց տարի խնդիրը թեր և դէժ քննելուց յետոյ, 1886-ին ընտրութիւններին չը մասնակցած անձերի համար խնդիրը պարզւել էր, և նոքա այս տարի նորից մասնակցել ևն մասամբ ընդդէմ, բայց մեծ մասամբ յօգուտ Վլադստոնի, յօդուտ Իրլանդիայի ինքնավարութեան, որի շնորհիւ և յաղթեց Վլադստոնը նոյն այն ծրագրով, որով նա վեց տարի առաջ չարաւար յաղթւել էր:

Վլադստոնի այս տարւայ ընտրողական յաղթութիւնը շատ կողմերից ներկայացնում է ընդհանուր հետաքրքրութիւն ոչ միայն անգլիացիների համար, այլ և ընդհանուր մարդկութեան համար:

Ամենից առաջ դա մի փայլուն օրինակ է մտքերի պրոպագանդայի անդլիական ձևի և անգլիական վերանորոգող կուսակցութեան գործելու ձևին, նորա թէ զգուշաւորութեան և թէ միաժամանակ համարձակութեան իւր ծրագիրները կազմելու գործում: Իրլանդիայի բաժանւելը Անգլիայից իւր ներքին խնդիրների համար՝ պահանջում են արդէն ոչ միայն իրլանդացիք, այլ և իրլանդացիներին այդ խնդրում միշտ հակառակ եղած անգլիացիք, զոնէ սոցա ձայնատուների կիսով չափ:

Դա մի մեծ օրինակ է թէ ինչպէս մի ըստ ամենայնի լուսաւոր և ուժեղ ազգ իւր իսկ սեպհական շահի համար կարող է գալ հանգչել էղոխտալան ու ճնշող տիրապետութեան հակառակ մտքերի, և թէ

ցեղով, տեմպերամէնտով, սովորութիւններով, կենցաղով, ժողովրդական իդէալներով ու ազգային տրագիցիաներով ոչ միայն տարբեր, այլ և ուղղակի հակառակ մի ազգի քաղաքական ինքնավարութիւնը որքան հաշտելի է տիրապետող ազգի շահերի հետ, եթէ նոցա մէջ զարգանայ փոխադարձ օգտակարութեան զաղափարը և յարգանքն ու սէրը դէպի մարդկայնութիւնը:

Իրլանդական հոմ-ռուլի կուսակցութեան յաղթանակը Անգլիայում տօնելու արժանի մի իրողութիւն է նաև մանաւանդ մանր ազգութիւնների համար: Ինչպէս կարող էր Անգլիան, Իրլանդիայի նախատինքը երեսին՝ անկեղծ, զօրեղ և անդադար պաշտպան հանդիսանալ Թուրքիայում մանր ազգերի ինքնավարութիւններին: Իւր տնային նման հանգամանքները անկարելի է որ կաշկանդած չլինէին նորա ձեռքերը: Արևելեան քաղաքականութեան համար այժմ նա, մի նոր ներքին յաղթանակի միջոցով, ձեռք է բերում աւելի ազատ շարժողութեան միջոց:

ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ: